

վախճանական մոայլ ու մահահոտ մշուշը կը պատէ շուրջերնիս, եւ երբ վերջնականապէս սպանել կ'ուզէն այս ցեղը, ահա գրականութիւն կ'ընէ ան, գեղարուեստի վրայ կը ճառէ, իր ազնուացման ու բարձրացմանը վրայ կը մտածէ: Գլո՞խ կ'ելլուի ասանկ ցեղի մը հետ:

Ու ասիկա Յայգալոյսն է, գերագոյնն ու վերջինը: Զարդարեան այսպէս տիտղոսած է իր գրական գործը. վասն զի խորհրդանշանական է ան. խաւարին մէջ լոյս մըն էր ան, որուն դողդոջուն ու դիպուածական ցոլքերը կ'իյնային ցեղին արինոտ իրանին վրայ, անոր ուրուային նիհարութիւնը քստմնելիօրէն երեւան բերելով: Յայգալոյսն է դեռ, ուր կը խաղցնենք մեր այլակերպ, բայց ողջ իրանը:

Բայց ո՞վ ըսաւ թէ արշալոյսը, վերջնական արեւափայլ արշալոյսը չպիտի գայ, չպիտի ցաթէ մեր վրայ. Յայգալոյսը իր վախճանն ունի, բայց Արշալոյսը յաւերժական է: Եւ թերեւս հեռու չէ այն օրը ուր Զարդարեան մեզ պիտի բերէ իր տաղանդին մէկ նոր շողը, այս անգամ *Արշալոյս* տիտղոսուած, վերջնական խորհրդանշանը մեր դժբախտ ճակատագրին: